

Իրեն ձայնակից է Մովսէս Բջնեցի, որ աւելի լայն խօսքերով կը ներկայացնէ Էջմիածնի աւերակ գրութիւնն եւ նորոգուած կերպարանքը. «Քանզի սկիզբն եւ պատճառ ձեռնարկութեան նորոգման գերագահ Աթոռոյս՝ երանելի հայրն մեր եւ պայծառ ջահն եկեղեցոյ՝ սրբազան հայրապետն Հայոցս մեծն Մովսէս եղեւ, որ եւ յԱստուծոյ շարժեալ ի սէր առ սուրբ Աթոռս բազմաշարչար աշխատութեամբ՝ անբերելի կրիւք գուն գործեալ հոգւով չափ սկիզբն արարեալ նախ մաքրեաց զսա ի դիզակուտեալ աղբից՝ յորում թաղեալ էր շուրջանակի յամենայն կողմանց, զորս եւ ջրով ողողեալ հարթայատակ գետին պատրաստեաց: Եւ ապա պարսպեաց, ըստ որում եւ յաջողեցաւ: Կատարեաց եւ զերից կողմանց շինուածսն որ ի միջոցին: Սրբեաց եւ գտաճար սրբոյն Գրիգորի ի զազիր ծրտաց թռչնոց. ըստ որում աւերակաց վայրաց է անզարգութիւն, որպէս երբեմն եւ մարգարէն Ամովս վասն Բաբելոնի նշանակէր՝ թէ Յուշկապարիկք բնակեացեն ի նմա եւ ողնիք ձագս հանցեն ի նմա: Գաղարեցուցեալ զճոռուղական ձայնս նոցա՝ որ զլսելիս մարդոց խլացուցանէին. եւ զլուսարանսն վանդակապատ յօրինեաց: Հանդերձեաց սալայատակ եւ զկոխելի երկիր որ ի նմա: Եւ եւս յառաջեալ ի բաց էառ զգմբէթ նորին՝ որ էր նիստ ի բնէ՝ եւ խախտեաց եւ բարձրաբերձ իմն տեսակաւ կանգնեաց. յորոյ կատարման եւ ինքն փո-